76. ԴԵՐ ՏԸԵՌԱԾ ՄԱՐԹԸ

Իլալ ա, չիլալ մին մարթ, մին կընեգյ ա իլալ։ Ըտահանք շատ քյասիբ ըն իլալ։ Մին թահրավ կըլխընին պահըմ ըն իլալ։ Մին հետ շենըմը հըրսանիքյ ա ինում։ Էտ կընգանն էլ ըն ծրեն տամ, տանըմ, նըստըցընըմ սոփըրեն կըլխեն։ Ամմա վըեր քյոխվեն կնեգյը կյամ ա, տընատարրն ասըմ ա.— Ա՛խչի, պատառ տըվըեր կաց, քյոխվակենը նստե։

Էտ կընեգյը պատառ տվըեր ա կըենում, քյոխվակենը նստում ա։

Մըն էլ վըեր գերեն կընեգյըն ա կյամ, ասըմ ըն. — Ա՛խչի, պատառ տվեր կաց դիրակենը նըստե։

Պատառ էլ ա տվեր կըենում, դիրակենը նստըմ ա։

Ասետ էլամ վըեր հարուստ կընեգյ ա կյամ, ասըմ ըն.— Ա՛խչի, պատառ էլ տվեր կաց։

Իստի տվեր կնալավ, էս կընեգյը ընգնըմ ա առե մըղակը։ Կենըմ չի, եր ա կենըմ, կյամ տոն։

Մարթին ասըմ ա.— Տու վրս, վեր տու վրս, բեդմա դեր տրեռնաս։

Մարթն էլ ճարը կըտրած ասըմ ա.— Ա՛ կնեգյ, լավ, հինչու ասըմ ըս, կանիմ, թաքյ լըհա քու քյեփավըտ ինի։

Էտ մարթը իրեսը վեր չի անըմ չըքյելանը մըրոքը ըրգյընանըմ չի։

Վեր մըրոքը ըրգյընանում ա, տանան տուս ա կյամ, քյընում թա դեր տեռնա, ամմա վեչ փիլոն օնե, վեչ էլ խաչ։

Շատ ա քյընում, թա խըրեգյ, ախրը տուս ա կյամ մին շեն։ Տու մեր ասիլ, էս շենումը դեր չի ինում։ Էս շենացիքյ տեսնում ըն, վրեր էտ մարթին դերու մընան էրկան մրոք օնե, ամմա դերու շենքը-շնորք չօնե, յանի քյի, խաչ, ավետարան, փիլոն չօնե, մուտանըմ ըն, հրցընում.— Ա՛ դեր, հի՞նչ ա պրտահալ, հի՞նչ ղազաբու յրս եկալ, էտ հի՞նչ հալում ըս։

Դերըն ասըմ ա. — Ա՛ վերթիքյ, տուս ըմ եկալ, թա կալերը օրթնիմ, էն ղոլավը ընցնելիս տեղը, կյոդերը ինձ յրա տեռեն, ինձ թըլընեցեն։ Հրմնչելաս նըհետ մեր շենը չի քյընացե, կըլոխ եր կալե թա կորչիմ, տուս եկե էս շենը։

Շենացիք շատ ըն ուրխանըմ, վրեր ուրանց շենն ա տուս եկալ էտ մարթը։ Տանըմ ըն տնում ուրանց դեր։ Էտ դերեն շատ լավ պահում ըն։

Քյընում ըն ղերին կնեգյըն էլ պուրում։ Էտ կընեգյն էլ ա շատ ուրխանում, վեր դըրակեն տեռավ, վրեր ամմեն տեղ սուփրին կլխեն ըն նրստըցնում։

Էս շենացիքյ մըչանք դոնգի յրն ընում, վեր ըսկի կըլխու չրն ընդնում, թա բա դերը ժամումը հի՞նչ բիդի ասե, հի՞նչ բիդի անե։

Մին օր էլ շենումը մին մարթ ա մեռնում։ Էս մարթը քյասիր ա ընում, ամմա դե չորս ախպեր ա ընում ըտրան։ Վեր տանում ըն թա թաղին, դերը սարավ ժամ ա ասըմ.

— Ալելույա՛, ալելույա՛՛՛, քյինիմ Ծամծոր՛, կյամ Ծրկոռե՛, ընդղան էլ կյամ Բընաղու՛ր... Ընդըղան ետ տրեռնամ էլհա կյամ Ծկոռե՛, Ալելույա՛՛՛...

Իտի մին քանե հետ ասըմ ա, վերչը էտ մարթին տանըմ ըն թաղում, կյամ տոն։

Շատ ա ընցնում, խրեգյ ա ընցնում, էտ շենին խուշեն տղան մեռնում ա։

Վեր տանըմ ըն, թա թաղին, դերը խուշեն պադեվ ընելե հետե ժամ ասելը պատառ ըրկընցընում ա։

Ասում ա.— Ալելույա՛, ալելույա՛՛՛, քյինիմ Ծամծոր՛, կյամ Ծրկոռե, ընդըղան էլ կյամ Բընաղո՛ւր, ընդըղան էլ կյամ Տըրպըղո՛ն*, ալելույա՛, ալելույա՛՛՛...

Ըստեղ էն քյասիր մարթին ախպերքյը կըղնվում ըն, թա խե՞

---

* Ծամծորը, Ծրկոռեն, Բնաղուրը գյուղեր են, Տրպոզոնն էլ Տրապիզոն քաղաքն է։

մեր ախպորը հետե քյեցավ վեչ Տըրպըզոն, խոշեն տըղեն հետե քյը-նում ա։

Ընդհանք կյամ ըն դեռին փոնում, մին լավ թակում, հալա քըցում, խաչը նան ավետարանը ծրեռքան ինքյ օնում, թող անըմ։ Դեռը թակված, փշրված կյամ ա տոն։

Կնեգյը ասըմ ա.— էտ հի՞նչ ա պըտահալ։

Դեռը լոխ նաղլ ա անըմ, թա։—Պա ասել չը՞ս խտի-խտի պեներ ա եկալ կըլոխս։ Կնեգյն ասըմ ա.— Աշկըտ էլ ըն հանալ, ըռխետ հերիք չա՞ր Ծամծորը, Ծրկոռե՞ն, Բընաղու՞ըը, վեր ընդը-ղան էլ քյեցեր Տըրպըզո՞ն, քյըեզ տեղն ա, առռե լավ ըն ըրալ, վըեր քյըեղ քյութըկաթակ ըն տըվալ։

Մրթըկնեգյ եր ըն կենում կյամ ուրանց շենը։ Էլհա էն քյասիրն ըն, էն քյասիրը։

Մարթը բիդի ուրան խելքավը, ուրան քըռթնընքավը ապրե, թա չէ ուրուշու խփիլավ ապրուստ չի ինի՞լ։